ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲ ընկերության միջև ինտերնետ հասանելիության ծառայությունների, անձանց տվյալների և հեռախոսազանգերի վերծանումների փաստաթղթաշրջանառությունն էլեկտրոնային տարբերակով կազմակերպելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲ ընկերությունն (այսուհետ՝ Կողմեր), ելնելով ծանրաբեռնվածության նվազեցման, նյութական ռեսուրսների խնայողության ուղղությամբ ընդհանուր ձգտումից, նպատակ ունենալով հնարավորինս օպերատիվ և արդյունավետ կազմակերպել դատարանների որոշումներով անձանց բաժանորդային տվյալները, նրանց կողմից օգտագործված հեռախոսային կապի և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների (բաժանորդային տվյալների և ինտերնետային հասանելիության տվյալների) վերծանումները (այսուհետ՝ Վերծանումներ) էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին տրամադրելու գործընթացը և դրանով իսկ՝ ապահովել նախաքննությունը ողջամիտ ժամկետում ավարտելու սահմանադրական պահանջը,

- անհրաժեշտ են համարում Վերծանումների ստացման գործընթացն արդյունավետ կազմակերպելուն ուղղված համատեղ քայլերի մշակումը և իրագործումը,
- գիտակցում են, որ քննարկվող նպատակներին հասնելը պետք է կրի համակարգված բնույթ՝ տեխնիկական նորարարությունների ներմուծմամբ:

Երկուստեք աշխատակիցների ծանրաբեռնվածության ,նվազեցման, նյութական ռեսուրսների խնայողության նպատակով կողմերը մտադրված են՝

- իրականացնել համատեղ միջոցառումներ դատարանների որոշումների և Վերծանումների օպերատիվ փոխանցման ուղղությամբ,
- զարգացնել տեխնիկական հնարավորությունների ներդրման հարցում փոխգործակցությունը:

Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն.

- ապահովում է «Էկենգ» ՓԲԸ-ի կողմից ներդրված և սպասարկվող էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված ուղեկցական գրություններով Վերծանումների վերաբերյալ դատարանների որոշումները կապի օպերատորին փոխանցելը,

– գործընթացի շրջանակում առաջացած խնդիրների լուծման հարցում ցուցաբերում է անհրաժեշտ օժանդակություն:

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն ապահովում է.

– սեղմ ժամկետում Վերծանումների էլեկտրոնային տարբերակով փոխանցումը Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի 1-ին բաժին,
– «Հրատապ» դրոշմակնիքը կրող ուղեկցական գրություններով ստացված դատարանների որոշումների առաջնահերթ կատարումը:

Կողմերը.

– դատարանների որոշումների և Վերծանումների փոխանցման գործընթացն օպերատիվ և արդյունավետ կազմակերպելու նպատակով մշակում են առաջարկություններ, անհրաժեշտ քայլեր ձեռնարկում դրանց իրագործման համար,
– կազմակերպում են վերոնշյալ գործընթացում ի հայտ եկած խնդիրների համատեղ քննարկում:

Ստորագրված է Երևան քաղաքում 2018թ. մարտի 29-ին, երկու բնօրինակով, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ՝

Ա. Հովսեփյան

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ գլխավոր տնօրեն՝

Հ. Ֆպրամազյան